ի սրբութենէդ զի միջնորդեսցես Բորրիկիզու թագաւորին, զի նա սահմանակից մեր է և կարէ զօգնութիւն առնել մեզ»:

(Եւ սոքա գնացեալ ի Հռոմ առ Սրբազանն, մատուցին նմա զաղերսից նամակն) և Պապն ցուակից լեալ զբարւոք յանձնարարութիւնս ինչ գրեաց և ետ նոցա տանել առ թագաւորն Յոհաննէս Գ. Բորթուկիզու, համանգամայն պատմելով զթըշուառութիւնս նոցին և եւս թէ ուղղափառ քրիստոնեայ գոլով նոցա, պարտիմք և մեք օգնել նոցին եւն:

Եւ այն 20 հայէշքն առեալ զգիրն Պապին Գրիգորի ուրախութեամբ ելեալ գնացին ի Բորթուկէզ քաղաքն և ետուն թագաւորին Յոհաննու: Եւ թագաւորն յորժամ ծանեաւ զթշուառութիւն նոցա, և ինքն թագաւորն եւս յոյժ բարեպաշտ գոլով՝ հրաման արար պատրաստել և զարդարել զհինգ նաւ զօրօք և ամենայն կահկարասի պատերազմականօք. և յորժամ պատրաստեցան՝ գրեաց զհրովարտակն թագաւորական առ սպարապետն իւր որ էր ի Միւզէմպիկ քաղաքն իւր ի Աֆրիկա ի կողմն ովկիանոսի հանդէպ Մատակասկառ կղզւոյն և հրամայելով նմա, զի անպատճառ առանց ինչ ընդդիմութեան գնասցէ ի Հապէշու թագաւորանիստ քաղաքն ի Կեօնտէր, և առեալ զայն ի ձեռաց ապստամբեալ մահմետականաց՝ տացէ հապէշից որպէս էր յառաջն:

## ՀԵԹՈՒՄ Բ՛. ԱՑՑԸ ՂԱԶԱՆ ԽԱՆԻ

Հեթում տէր Կոռիկոսի՝ որ ծանօթ է իբր Հեթում Պատմիչ Թաթարաց անուամբ մեր հին պատմիչներուն կարգին, իր Համառօտ Պատմութեան մէջ 1294 թուականին դիմաց կը նշանակէ, «ՉԽԳ սպանաւ Քեղաթուն խանն, և նստաւ Պայտուն խան: Եւ ի սոյն ամի սպանաւ Պայտուն, և նստաւ խան Խա́զան, որդի Արղունին: Եւ ի նո́յն ամի գնաց թագաւորն հայոց Հեթում առ Պայտուն և գտաւ խան զԽազանն[1]»:

Հեթում Բ՛ Թաթարաց արքունիքը կատարած այս այցելութեան մասին քիչ մը աւելի մանրամանութիւն կու տայ Ստեփանոս Օրբելեան իր Պատմութեան Բ. հատորին մէջ (էջ 222): Այս հատորը, սակայն Օրմանեան իր Ազգապատումին Բ. հատորին մէջ՝ հատուած թ. 1189 (էջ 1727–8) կը ներկայացնէ Կիլիկիոյ Հայոց Թաթարաց հետ ունեցած յարաբերութեանց այս շրջանին մասին: Ան կ'ըսէ: «Ան (Հեթում Բ) կանուխէն մեկնած էր Կիլիկիայէ՝ որ Քեղաթուին յաջորդ Պայտունը շնորհաւորէ, սակայն սա արդէն Ղազանի յարձակումովը գրաւած էր, և Հեթում պարտաւորուեցաւ Մարաղայի մէջ սպասել Բաղդէացի պատրիարքին մօտ, մինչեւ որ գործը յստակուի: Իսկ երբ Պայտուն ինկաւ և Ղազան գահին տիրացաւ և բարձրացաւ, փութաց անոր մատուցանել իր մեծարանքը: Այս առթիւ Ղազան հեգնօրէն դիտել տուաւ՝ թէ նա ո́չ իրեն, այլ Պայտունի համար ճամբայ ելած էր, որուն Հեթում կը պատասխանէ՝ թէ իրենք Թաթարներու գերագահ իշխանութիւնը կը պատուեն, ով ալ ըլլայ զայն վարողը, ինչ որ Ղազանին շատ հաճելի կու գայ և մեծաշուք պատւով կ'ընդունի Հեթումը: Սա ալ համարձակութիւն կ'առնէ ծանուցանել արքայի զանցս աղետից քրիստոնէից,

1. Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագրքին 1319. Նկարագրեց Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան. – Անթիլիաս, 1933, էջ 101.